

№ 60 «Գ Յ Ա Կ Ե Յ Ա Կ Կ Ր Ե Կ Ե Յ Ե » № 60

ՀԱՄԿԿ (Բ) Կ. Կ.
ՎՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(1929 թ. հունիսի 18-ին)

338.1
Հ-21

ՀԱՅ. Ժ. Պ. Հ. Խ. Ա. Տ. Հ. Հ. Խ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.

ՏԱՐԻՎ. Ա. — 1929

18.02.2014

29867

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆՔ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԱԼ «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ

կուլ.

1. Արդեգոյց անտառային աշխատավորի

50

3. 2. Փիրումյան և Մելքոնյան—Բնչութեան ձեռնուու յեղանակնում լուղ և շինու պահիր պատրաս-

3

9/3-38

338.1 | ՀԱՐԿ-Բ-Հ

2-21 | ՊՐԻՂԻՋԵՐԵ

ԲԱՆԱԳՐԻ ՎՐԱ

1929

10-15 Կ26 | 31/15(8)

10 50 20 10 5 15 35 15 15

ց մշակու-

թիւնիքը,

բոլ. մասն

ն (ապառ.)

(ապառված)

ըրակիքն ու

գործնական

(ոված) 1 ու.

Հակությու-

ուլ. կաթու-

զայմանագիր

ուղակութ.

իսպողի այ-

յան Յերկրա-

ն հարցի մա-

ուսկցության

ընուիր թան-

աբերը (ապառված)

17. Ռ. Արմենիան—Խոշոր յեղջուրավոր անասունների

ժամանակը (ապառված)

15

15

15

15

15

2802-10

338.1


Z-21 մե

ՀԱՄԿ (Բ) Կ. Կ.

ՎՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀԱՄԿ (Բ)ԿԿ նշում ե., չնայելով այն Հանգամանքին, վոր բամբակագործությունն իր վերականգնման շրջանի սկզբին գտնվում եր ծայր աստիճան ցածր մակարդակի վրա, վոր սակայն, չնորհիվ կուսակցական և խորհրդացին որգանների ցույց տված աջակցության, ուշադրության և տնտեսական մարմինների յեռանգուն աշխատանքի ու բամբակացան լայն մասսաների ակտիվ մասնակցության հաջողվեց վերականգնել և հասցնել մինչ հախալատերազման մակարդակին, գլխովին կոռպերացման յենթարկել բամբակացաններին և կոնսորակտացիալի շրջանակի մեջ առնել բամբակի բոլոր ցանքսերը: Այդ հանգամանքն իր հերթին զգալիորեն բարձրացրեց չքավոր-միջակ բամբակացան լայն մասսայի տնտեսական և կուրտուրական կյանքի մակարդակը:

2. Մասնավորապես, վորպես անվիճելի նվաճումներ, կկ նշում ե.—ա) ջրաշինարարական սիստեմի մի քանի բարելավումները, բ) բարելավված տեսակավոր սերմֆոնդի ստեղծելը և այդ սերմերով գյուղացիական ցանքսերի նշանակալից մասին ապահովումը, գ) գյուղացիական անհանդատացման անսեսություններում հանքային պարագաներութերի, տրակ-



9/3-38

առների և յեվրոպական գյուղատնտեսական ինվենտարի կիրառումը, դ) բամբակազտման արտադրության մեջ տեխնիքական վերակառուցման և ուսցիոնալիզացիայի անվիճելի հաջողությունները, յե) բամբակացանների լրիվ կոռապերացումն ու բամբակի բոլոր ցանքսերի կոնտրակտացիան:

3. Բամբակագործության զարգացման այս դրական կողմերին զուգընթաց ՀԱՄԿԿ(բ) կ.կ. գտնում է ինչպես վոռոգված տարածությունների աճումն ու բամբակի ցանքսերի տակ գանգող վոռոգվող բոլոր հողերի տեսակարար կշիռը, նույնպես և բամբակագործության զարգացումը Միության նոր և հեռավոր շրջաններում (ԱՄֆիշ, Կազակստանում, Տաջիկստանում և այլն), ակնահայտ անբավարար: Միաժամանակ կ.կ. թույլ ե համարում բամբակագործության համայնացված հատվածի աճումը, բամբակի ցածր բերքատվությունը:

4. ՀԱՄԿԿ (բ) կ.կ. նշում ե, ինչպես ԽՍՀՄ.-ի ինդուստրացման համար, նույնպես տեքստիլ արդյունաբերության համար հումութիւն բազա ստեղծելու տեսակետից բամբակագործության զարգացման բացառիկ կարեվոր նշանակությունը:

Միության մեջ ընթացիկ հնգամյակում բամբակագործության զարգացումը պիտի ընթանա մեր ունեցած բոլոր հնարավորությունների մաքսիմալ արագությամբ՝ ընդարձակե-

լու բամբակի ցանքսերը և բարձրացնելու նրա բերքն այն հաշվով, վորպեսզի հնգամյակի վերջում Միության տեքստիլ արդյունաբերությունը վոչ միայն ազատագրվի արտասահմանից ներմուծվող բամբակից, այլ և տեքստիլ արդյունաբերության հետագա զարգացման ու լայնացման համար ունենա անհրաժեշտ պաշտ:

Մինչդեռ այդ կարեոր խնդիրը բամբակագործության զարգացման համար կազմած հնգամյա պլանով չի լուծվում, վորը, հաշվի չառնելով բամբակագործության ծավալման բոլոր հնարավորությունները, հանդիսանում ե նաև խիստ նվազեցրած և յենթակա յե խոչոր չափերով մեծացման: Այդ իսկ նպատակով ՀԱՄԿԿ(բ) կ.կ. անհրաժեշտ ե համարում վերանայել բամբակագործության զարգացման հնգամյա պլանը և 1932 թ. համար նախատեսված 590,4 հազար տոննի փոխարեն ստանալ 787,2 հազար տոնն բամբակ:

5. Յենելով այդ տեսակետից, կ.կ. առաջարկում կ.—ա) վերանայել ջրատնտեսական աշխատանքների պլանը, ուշադրություն դարձնելով և նյութական միջոցները կենուրոնցնելով բամբակի ցանքսերի տարածության ընդարձակման և ստացվելիք քանակի եփփեկտավորության վրա, ինչպես և շինարարության բնագավառում արագացնել նրա ծավալումն ու ավարտումը, բ) ամենակարճ ժամանակում վերականգնել խոչոր կապիտալ

Ներդրումներ չպահանջող տեղական քայլար—
ված վոռողման սիստեմը և դրանով իսկ ըջա—
նառության մեջ զնել չոգտագործված հողերը,
դ) ջրառողակործման ուցիոնալիզացիայի
միջոցով բարձրացնել գոյություն ունեցող
սիստեմների ոգտակար գործունեությունը, դ)՝
ընդարձակել այն հողերի մեքենայական վո—
ռողման աշխատանքները, վորոնք չեն յեն—
թարկվում ինքնահոս վոռողման, և անհապաղ
ձեւնարկել հողերը երեքորոժեքնաներով վո—
ռողելու հարցի մշակմանը, յե) ամենակարճ
ժամանակում ավարտել Վախչի, Զիրչի-Ան—
չերնի շինարարության հարցի քննությունը,
ինչպես և Խորեզմի, Կաշկադարի և Անդրկով—
կասի տեղական սիստեմների վերակառուցման
և Անդրկովկասում՝ Միլիի և Մուղանի տա—
փաստանների վոռողման խնդիրը: Առանձնա—
պես քննության առնել «Голодной степи» նոր
ջրաշինարարության նպատակահարմարու—
թյան հարցը:

6. Փոքր սիստեմների ջրաշինարարու—
թյանն ավելի հաջողությամբ և եժան իրա—
զործելու համար անհրաժեշտ ե այլպիսին
կատարել մելիորատիվ ընկերություններում:
կազմակերպված գյուղացիական լայն մասսա—
ների աշխատակցությամբ: Բայ վորում տե—
ղական, կուսակցական և խորհրդային կազ—
մակերպությունները ոլիտի ուշադրություն
դարձնեն մելիորատիվ ընկերությունների
զարգացման ու ամրապնդման վրա և ամեն

կերպ աջակցեն, վոր նրանցում ծավալվի կոռ—
պերատիվ հասարակայնությունը:

7. Տեղական, խորհրդային ստորին ապա—
րատի՝ բամբակագործության զարգացման
նկատմամբ ունեցած շահագրգությունը
բարձրացնելու և փոքր սիստեմների ջրաշինա—
րարության բարելավման ու ջրառողակործ—
ման գործում նրա ակտիվությունը բարձրա—
ցնելու նպատակով անհրաժեշտ համարել.—
ա) տեղական ջրային աղմինիստրացիան յեն—
թարկել համապատասխան գործկոմներին,
այդ նպատակով տարածելով Միջին-Ասիայի
փորձը նաև մյուս բամբակագործական շրր—
ջաններում, բ) տեղական բյուջեյին հանձնել
ջրային տուրքի հիմնական, մեծ մասը, ըստ
վորում այդ միջոցները բացառապես ծախսել
ջրառողակործման կարիքների վրա, դ) հո—
գուտ տեղական բյուջեյի սահմանել դրամա—
կան վորոշ մասնարում՝ համապատասխան
բամբակագործական կազմակերպությունները
կմթերեն տվյալ շըջանում:

8. Նշելով նոր յուրացվող տարածու—
թյունների միանգամայն անբավարար դրու—
թյունը, հողաշինարարական աշխատանքների
անկանոնությունը հողա-ջրաշինարարական
աշխատանքների վոչ համաձայնեցրված լի—
նելը, ինչպես նոր վոռողվող, նույնպես և
եքսպլոատացիոն ձեռնարկումների կիրառման
հետևանքով նոր յուրացվող հողերի վրա, կկ

անհրաժեշտ և համարում առաջարկել Անդր-
յերկրկոմին, Միջին-Ասիայի Բյուրոյին և Կա-
զակստանի Յերկրային Կոմիտեյին մշակել և
կիրառել այնպիսի ձեռնարկումներ, վորպի-
սիք կապահովեն Հողա-ջրաշինաբարական աշ-
խատանքների արագ թափը, կարագացնեն նոր
տարածությունների յուրացումը և ավելի եփ-
ֆեկտավոր կդարձնեն նրանց ոգտագործումը,
հասցնելով բամբակի ցանքսերը նոր վոռո-
գումների հետևանքով ընդարձակված Հողերի
ընդհանուր տարածության վոչ պակաս 50
տոկոսի:

9. Նոր վոռոգվող Հողերն ավելի արագ և
եփփեկտավոր ոգտագործելու նպատակով, այլ
և միաժամանակ բամբակագործության մեջ
սոցիալիստական հատվածը ամրապնդելու
համար նոր, խոչըր վոռոգվող Հողային մաս-
սիվներում, —վորպիսիք ստացվելու յեն խո-
չըր վոռոգումների հետևանքով, —այդպիսի Հո-
ղերն առաջին հերթին և մեծ մասամբ հատ-
կացնել բամբակի պետական պլանացիանե-
րին և կոլլեկտիվ տնտեսություններին:

ՀԱՄԿԿ (բ) ԿԿ անհրաժեշտ և համարում
Հնդամյակում բամբակային խորհ. տնտեսու-
թյուններում վոռոգվող Հողերի տարածու-
թյունը Միության մեջ հասցնել 250 հազար
հեկտարի, վորպից Միջին-Ասիայում և Կազա-
կստանում 200.000 հեկտար և Անդրկովկա-
սում 50.000 հեկտար:

10. ՀԱՄԿԿ(բ)ԿԿ ընդունելով, վոր բամ-

բակագործական շրջաններում գյուղատնտե-
սության քաղաքականության կարեորագույն
խնդիրը հանդիսանում է ջրարբի հողերի մաք-
սիմալ ոգտագործումը բամբակի ցանքսերի
համար, դառնում և, վոր հնդամյա պլանով
նշված բամբակագործական շրջաններից վոչ
բամբակային կուլտուրաների վտարումը ան-
հրաժեշտ է: ԿԿ բացարձակորեն անքույլա-
տրելի յեն համարում ջրարբի, բամբակի ցանք-
սերի համար պիտանի հողերը ոգտագործել
չալքուկի, շաբարանակնդեղի, սորգոյի և այլ
կուլտուրաների համար: Թուրքեստան-Սիրի
յերկաթգծի կառուցման մոտ ապագայում ա-
վարտվելը և հացահատիկային ցանքսերի մեծ
մասի հնարավոր տեղափոխությունը անջրդի
Հողերի վրա, ապահովում են բամբակի ցանք-
սերի հնարավոր ինտենսիվ ընդարձակումն
ի հաշիվ մյուս կուլտուրաների:

Վոչ բամբակային կուլտուրաները բամ-
բակով փոխարինելու և հետագայում
նրա համար ավելի նպաստավոր պայ-
մաններ ստեղծելու նպատակով, ԿԿ ան-
հրաժեշտ և համարում բամբակացանների
համար պահպանել հարկային արտոնու-
թյունները, բամբակի ցանքսերին ընձեռել
ջրամատակարարման առավելություններ, ամ-
բողջ տարվա ընթացքում ուժեղ թափով հաց
մատակարարել, կատարելով նույնը քոչի
(ՏԿՕԿԻ) ժամանակ, մտակարարելով նրանց
արդյունարերտական ապրանքներ և անասուն-
ների կեր:

11. Բամբակագործության զարգացումը, վորպես հողագործության պրոցեսսիվ ձեւ, կոնստանտագիտայի և կոռպերագման միջոցով աղահովելով չքավորության ու միջակների անմիջական դաշնաքը Խորհրդային իշխանության տեղական որդանների հետ և դրանով իսկ աղաետով նրանց գյուղի շահագործող վերին խավերին ստրկանալուց, առաջ ե բերում գյուղի բոլոր կուլակ տարրերի աճող դիմագրությունը։ Կուլակների հայտնաբերած այդ ակտիվությունն իր հերթին պիտի հանդիպի տեղական, կուսակցական բոլոր կազմակերպությունների վճռական հակահարվածին։ Կուլակների այդ հարձակման գեմ կազմակերպելով հակահարված, կուսակցական կազմակերպությունները չքավոր-միջակ բամբակագործության ունեցած նշանակությունը՝ նրանց անտեսական և կուլտուրական կյանքի մակարդակի բարձրացման ինդրում և նրանց աղատագրումը՝ կուլակների և չարչիների ձեռքից։ Կուսակցական կազմակերպությունները պիտի կազմակերպեն գյուղի բոլոր հեղափոխական տարրերին (բատրակ, գյուղի չքավորություն, կոմյերիտ) և նրանց քաշեն այն պայքարի մեջ, վոր տարվելու յե բամբակագործության զարգացման և բամբակագործական շրջաններից վոչ բամբակային կուլտուրաները վտարելու համար։

12. Յելնելով գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի արագ թափով զարգանալու ընդհանուր խնդիրներից, վորպիսին տեղի ունի չքավոր-միջակ գյուղացիական մասսայի կոլեկտիվացումն ամեն կերպ խրախուսելու միջոցով, և նկատի ունենալով բամբակագործական շրջաններում բանվորական ձեռքերի և քարշող ուժի անբավարար լինելը, վորը պայմանավորված ե բամբակագործության արագ զարգացմամբ, —անհրաժեշտ համարել ընթացիկ հնդամյակում բամբակի բոլոր ցանքսերի մեքենայական մշակումը հասցնել $90^{\circ}/_0$ -ի և բամբակը մեքենայով ցանելը՝ $70^{\circ}/_0$ -ի։ Այդ նկատակով անհրաժեշտ ե. —ա) բամբակագործական շրջաններն լրիվ կերպով ապահովել 15.000 տրակտորների ներմուծմամբ, վորից 2200-ը մուծել 1929—30 տնտեսական տարում, բ) անմիջապես ձեռնարկել Միջին-Ասիայում կառուցելու մի գործարան, վորը կարտագրի միայն բամբակագործության համար յուրահատուկ ինվենտար (շարքացաններ, կուլտիվատորներ, բկատուներ), վորպիսի գործարանի կառուցումն ավարտել մեկ տարվա ընթացքում, գ) հիմնել վերանորոգության բազա և վերանորոգող արհեստանոցներից ցանց՝ տրակտորների և ավտոտրանսպորտի վերանորոգման համար։ Միաժամանակ չսպասելով այդ գործարանի կառուցման ավարտման, այժմ իսկ հանձնարարել ԳֆԸՆ-ին ձեռք առնել բոլոր միջոց-

ները՝ գոյություն ունեցող գյուղատնտեսական գործարաններում կազմակերպելու բրկատու գործիքների արտադրություն։

Հանձնարարել Միջին-Ասիայի Բյուրոյին, Անդրյերկոմին և Կազակյերկոմին՝ Արձմիության և Աշխատղկոմատի հետ միասին ուսումնասիրել գործազուրկներին բամբակը հավաքելու աշխատանքների համար ավելի լայն չափերով ոգտագործելու հարցը։

13. Նախագծված բերքատվության չափն անբավարար համարելով, ձգտել հնդամյակի վերջում բամբակագործական չըջաններում բամբակի հումույթի բերքատվությունը հասցնել 40%-ի, իսկ Անդրկովկասում՝ 70%-ի։ Դրա համար անհրաժեշտ է. —ա) բոլոր նախկին հողերի ցանքսերը 100%-ով ապահովել հանքային պարարտանյութերի մատակարարմամբ, բ) արագացնել Միջին-Ասիայում պարարտանյութերի գործարանի կառուցումը, ինչպես և հանձնարարել ԳՖՏԽ-ին քննելու Անդրկովկասում արհեստական պարարտանյութերի գործարանի կառուցումը, ինչպես և հանձնարարել ԳՖՏԽ-ին քննելու Անդրկովկասում արհեստական պարարտանյութերի գործարանի կառուցումը։ Հարցը և շատապ կերպով ձեռնամուխ լինել Անտյուրենի Փոսֆորային պարարտանյութերի գործարանի կառուցմանն այն հաշվով, վորպեսզի նրա կառուցումն ավարտվի 1930 թ., գ) ձեռք առնել միջոցներ բուծելու բամբակի ավելի բերքատու և ձեռնամուխ տեսակները, և նկատի ունենալով միայն տեքստիլ արդյունաբերության մինիմում պահանջները, սահմանափակել յեր-

կարաթել սերմերի հայթայթումը, դ) բամբակագործական շրջաններում զգալիորեն բարելավել գյուղատնտեսական փորձնական գործը և շտապեցնել փորձնական աշխատանքների հետեանքների փոխադրությունը գյուղացիական գաշտերը, յե) ուժեղացնել աղգարնակությանը ցույց տրվող ագրոպնությունը, և բամբակագործ աշխատավորության լայն խավերի աղբոնոմիական անգրագիտությունը լուծարքի յենթարկելու համար տանել լայն աշխատանք, կազմակերպելով բամբակագործական արտադրական խորհրդակցություններ և բատրակներից, չքավորներից ու միջակներից, ստեղծել գյուղատնտեսական լայն ակտիվ, զ) բամբակագործական շրջանների 1-ին և 2-րդ աստիճանի դպրոցների ծրագրում մտցնել ագրոնոմիական և տեխնիքական ականական գիտելիքների հիմունքների պարտադիր ուսուցում և ծանոթացնել բամբակի մշակության ավելի կատարելագործված տեխնիկայի հետ, ե) ցանքսերը լիովին ապահովել լավագարակ սերմերով և աղբոտ սերմերն իր ժամանակին լավորակ սերմերով փոխարինելու համար ապահովել խորհրդային սերմաբուծարանների զագացումը և սերմացուների բազմացման նպատակով ներդրավել գյուղացիական (գերկանական) սերմաբուծական ընկերությունները, ը) Գլխարամբակիոմն ամեն կերպ պիտի աջակցի ու խրախուսի բամբակի սերմագտիչ

և բերքը հավաքող մեքենաների մեքենայակազմության:

14. Բամբակագործության վերաբերյալ գիտական-փորձնական հիմնարկների (սելեկցիոն կայան, պարարտացման կայան, ենաումոլոգիական կայան, փորձնական բամբակագոտիչ գործարան, մեքենայափորձական կայան) աշխատանքներն ուժեղացնելու համար Տաշկենդում՝ Գլխամբակկոմի իրավասության ներքո հիմնել բամբակագործական գետական-հետազոտական ինստիտուտ:

Ազգային հարկումների զարգացմանը զուգընթաց կկ անհրաժեշտ է համարում շտապեցնել այն ձեռնարկումների մշակումը, վորոնք կարող են շահագրգուել գյուղացիական (գեխկանական) միություններին ինչպես մասնի հատկությունը, նույնպես և բերքատվությունը (ցուցահանդեսներ, լավագույն նմուշների պարզեատրում և այլն) բարձրացնելու տեսակետից: Նկատի ունենալով կրտսեր ագրոպերսոնալ՝ ունենալու սուր կարիքը հանձնարեկ Անդրկովկասի, Միջին Ասիայի և Կազակստանի կուսակցական, տնտեսական և կոռուպերատիվ կաղմակերպություններին ընթացիկ տարում Միջին-Ասիայում, Անդրկովկասում և Կազակստանում կազմակերպել միամյա զասընթացներ՝ փորձված գյուղացիութեանաններից, վոչ պակաս 1500 հոգի, կրտսեր ագրոպերսոնալ պատրաստելու համար, ինչպես և դպրոցների դասատուների

համար կազմակերպել ամարային գյուղատընտեսական դասընթացներ:

15. ՀԱՄԿԿ (ր)ԿԿ անհրաժեշտ է համարում համապատասխան վաղահաս սերմերի տարածման, ցանքսերի ապահովագրման (անբերբիության գեպքում) և այլ արտոնյալ ձեռնարկումների միջոցով զարկ տալու բամբակագործության զարգացմանը (Դաղստան, Հյուսիսային Կովկաս) և բամբակագործության փորձերի ծավալմանը (Ուկրայնա, Ղրիմ, Աստրախան) նոր շրջաններում: Այսպիսով, բամբակի ցանքսերի տարածությունը նոր շրջաններում հնդամյակի վերջին հասցնելով 2000 հեկտարի:

16. Բամբակագործության զարգացման և նրա հեռավոր շրջանները մուտք գործելու անհրաժեշտ պայմանը հանդիսանում է հաղորդակցության ճանապարհների զարգացումը, նոր յերկաթղեների կառուցումը, ավտոտրանսպորտի զարգացումը, խճուղային և գետնուղիների կառուցումը և գոյություն ունեցող ճանապարհների բարելավումը: Այդ նպատակով անհրաժեշտ է — (ա) յերկու տարվա ընթացքում ավարտել Զարժո-Խիլա-Նոր Ուրդեհնչ յերկաթղենի կառուցումը, (բ) շտապեցնել հարավային Կիրգիզիայի, Ֆերգանի, Բուխարայի և Սարբերադի (Աղրբեջանում) յերկաթուղային յենթաճյուղերի կառուցումը, (շ) բացառիկ ուշադրություն դարձնել գետն և խճուղային ճանապարհների բարելավման

վրա: Հեռավոր շրջաններից բամբակի տեղափոխելու համար կազմակերպել ավտոտրանսպորտային յերթևեկություն:

17. Բամբակագործության բարձրացումը և բամբակագործ ազգաբնակության բարեկեցությունն ազդակ են հանդիսանալու՝ նշանակալից չափերով ուժեղացնելու ազգաբնակության կուտակումները: Անհրաժեշտ է այդ կուտակումների արտադրական ուղղությունն ապահովել և մաքսիմալ չափերով՝ նրանց ներգրավել դեպի հանրայնացված հատվածը, գլխավորապես դեպի ջրաշինարարությունը՝ մելիորատիվ սիստեմի միջոցով:

18. Միությունից՝ բամբակագործական շրջանների շուկաներն ապրանք ներմուծելը պիտի արտացոլի բամբակագործության վերակառուցման ներկա շրջանի առանձնահատկությունները: Շրջանի պարենավորման-խառնի (Փյուրայ) պահանջները լիովին բավարարելուն զուգընթաց, ներմուծվող ապրանքների ընդհանուր մասսայի մեջ ծանրության կենտրոնը սովառողական նշանակություն ունեցող ապրանքներից պիտի փոխադրվի արտադրական նշանակություն ունեցող (տրակտորներ, մեքենաներ, գործիքներ, պարարտանյութեր, շինանյութեր և այլն) ապրանքների վրա:

19. Բամբակագործության զարգացման խնդրի իրագործումը, վոր բղխում ե ԽՍՀՄ-ի ինդուստրացման պլանից, իրագործելի յեմիայն գյուղատնտեսության վերակառուց-

մամբ և հիմնված ե բամբակագործական տընտեսության սոցիալիստական հատվածի զգալիորեն ուժեղացման, խորհ. և կոլեկտիվ տնտեսությունների շինարարության աճման, կոոպերացիայի ամրապնդման և հողաշինարարության ու ջրաշինարարության կիրառման վրա:

Մասնավորապես առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է. —ա) ուժեղացնել գյուղացիական անհատական տնտեսությունների արտադրական կոոպերացման պրոցեսը և բամբակագործական արտադրական կոոպերացիայի գործունեությունը, բ) զարկալ տալ ինչպես կոոպերացիայի, նույնպես և պետական որգանների կազմակերպած մեքենատրակտորային կայանների և վարձակետների զարգացմանը, գ) աստիճանաբար կարճատև կոնտրակցիան փոխարինել յերկարատև կոնտրակտացիայով, վորի մեջ կմտնեն տեխնիկայի և մշակության բարելավման պայմաններն ու կնպաստեն կոլտնտեսության շինարարության պրոցեսի արագացման:

20. Բամբակագործական տնտեսությունների վերակառուցման հիմնական աշխատանքները պիտի ընթանան բամբակագործական կոոպերացիայի միջոցով, վորն ամբողջովին ընդգրկելով մթերման և վաճառահանման ֆունկցիաները, վճռականորեն պիտի անցնի իր անդամների արտադրական միացման և արտա-

գրական սպասարկման, գրանով իսկ նախապատրաստելով ամբողջ գյուղերի կամ մի քանի գյուղերի կոլեկտիվ արտադրությանն անցնելու նախադրյալները։ Սակայն անհրաժեշտ է նշել, վոր չնայելով բամբակացանների կազմակերպչորեն գլխովին ընդգրկվելուն, այնուամենայնիվ բամբակագործական կոռպերացիան տակավին թույլ է։ Իր առաջ գրած խնդիրների կանոնավոր իրագործման համար կոռպերացիան ավելի մեծ չափերով պիտի խորացնի իր կազմակերպությունն ամրապնդելու աշխատանքները, զարգացնի կոռպերատիվ հասարակայնությունը, բատրակներից, չքայլորներից ու միջակներից ստեղծի ուժեղ ակտիվ և ավելի ուժեղ թափով ծավալի չքայլորներին ոգնելու աշխատանքը՝ նրանց կոլլեկտիվ տնտեսությունների մեջ առնելու համար։

21. Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի ընդարձակումը, վոր նշված են նպամյա պլանով, կա համարում ե անբավարար։ Առաջարկելով բամբակագործության հանրայնացված հատվածի արտադրանքը հընդամյակի վերջում հասցնել ընդհանուր արտադրանքի 30% -ին, կա միաժամանակ մատնանշում ե, վորպես անհրաժեշտ պայման, հատուկ ուշադրություն դարձնել՝ ստեղծելու տեխնիկորեն ուժեղ սարքավորված և հողաշենարարված կոլ. տնտեսություններ։

913
938

ՏԱԶԻԿԱՆԻ ՄԱՍԻՆ

22. Յելակետ ունենալով Տաջիկստանի Ավ. Սիշ կլիմայական և հողային բարենպաստ պայմանների և պիտանի միջոցների առկայությունը, վորոնք համապատասխան ձեռնարկումների կիրառման հետևանքով հնարավորություն կտան բամբակի ցանքերի համար ողտագործել նշանակալից չափերով հողային մասսիներ, անհրաժեշտ համարել բամբակի ցանքերի տարածությունը, վոր 1928-29 թ. համառմ եր 61.000 հեկտարի, հնդամյակի վերջում հասցնել 150.000 հեկտարի, դրա մեջ հաշվելով նուև խ. տնտեսությունների ցանքսերը։

23. Բամբակագործության զարգացման պլանի իրական իրագործումը ապահովելու նպատակով Տաջիկստանի Ավ. Սիշ կառավարությանն առաջարկել. — ա) անմիջապես ձեռնամուխ լինել կազմելու ծրագիր Տաջիկստանի և Ռուսականի (Ֆերգանի) Ս.Խ.Հանրապետությունների գերբնակչություն ունեցող շրջաններից տեղափոխել 20.000 գելսկականական անտեսություններ և բնակեցնել նոր վոոոգվող և ներկայումս ազատ հողերում, բ) հավանություն տալ չԱՄԿ (բ) կ. կ. Միջին-Ասիայի Բյուրոյի և Տաջիկստանի կառավարության վորոշումներին՝ հողեր հատկացնելու այն պայմանագրամած կարմիր բանակայիններին՝ վորոնչք կանկանան մնալ Տաջիկստանում։ Բնակեցնեմը կատարել այն Ա. ՄԱԿԱՐԵՎԻ



հաշվով, վորպեսզի աշնանը ավարտված լինեն հոգեր հատկացնելու և պատրաստելու աշխատանքները, գ) հանձնարարել կազմելու բաժ-րակացանության անցնող անտեսություններին ցորեն և բրինձ մատակարարելու ծրագիր, դ) հանձնարարել Տաջիկաստանի Ավ. ՍԽՀ տևումնասիրելու բրինձի մշակության հնարավորությունն այն ըթանների հոգածակարում (ձահային ըթաններ), վորոնք լումբակի ցանքերի համար անպետք են, և հոգածյապան կազմել չալթուկի ցանքերի մաքսիմալ զարգացման համար, ինչպես և անջրդի հոգագործության զարգացման ու նրա բերքատվության բարձրացման համար:

24. Նկատի ունենալով Տաջիկաստանի Ավ. ՍԽՀ տնտեսության ապրանքայնությունն ու բաժրակագործության զարգացման թափը և ապրանքների պակասության պատճառով հումութի մնալը տեղական ազգարնակության մոտ, անհրաժեշտ համարել ուժեղացնելու արդյունաբերական ապրանքների մատակարարումը Տաջիկաստանի Ավ. ՍԽՀ:

25. Նկատի ունենալով տեղական ազգարնակության ունեցած քարշող ուժի պակասը, նբաւ ունեցած գյուղատնտեսական ինվենտարի սրբիմիակիլ լինելը և բաժրակագործությունը մեքենացման յենթարկելու անհրաժեշտությունը, կարեսը համարել, վոր Գլխարամբակեկոմը և Միջին-Ասիայի գյուղատնտեսական ինվենտարի մատակարարությունը բաժրակա-

գործական ծրագրել մեծացման համապատասխան խան վերանայեն գյուղատնտեսական ինվենտարի մուծման պլանն այն հաշվով, վորպեսզի հնգամյակի վերջում բաժրակագործական բոլոր տնտեսություններն անցնեն յեվրոպական գյուղատնտեսական ինվենտարի գործության: Իջեցնել գյուղատնտեսական մեքենաների արժեքը, հասցնելով նրանց գները Միջին-Ասիայի բաժրակագործական հիմնական ըթաններում գյուղատնտեսական գներին:

26. Առաջիկա 1929—30 թ. Տաջիկաստանին արամագրել վոչ պակաս 300 հատ արակար այն 2000 տրակտորներից, վորովիսիք վորոշված և տալ Գլխարամբակեկոմին, պարտավորեցնելով Տաջիկաստանի կառավարությանը և Գլխարամբակեկոմին ձեռնամուխ լինել հիմնելու վառելանյութերի բազա և վերանորոգող արհետանոցների ցանց:

27. Նշելով բաժրակի վերին տատիճանի ցածր բերքատվությունը Տաջիկաստանում, վերջինիս աղբասպասարկման ամբողջ գործը հանձնել Գլխարամբակեկոմին, վորին և հանձնարարել Տաջիկաստանի կառավարության հետ միասին մշակել բերքատվությունը բարձրացնելու ձեռնարկումներ:

28. Միջին-Ասիայի Զրանուեսությունը և Տաջիկիջրանատեսությունը պիտի արագացնեն մանր ջրաշինարարությունը, մասնավորապես արագացնելով տեղական ոխտեմների բարելավման աշխատանքները, այդ նպատակով վե-

բանայելով 1929-30 թ. կոնտրոլ թվերով պահանջվող միջոցները:

29. Զեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի Դյուշամբեկուրդան-Ծյուբե յերկաթզծի և Կուրգան-Ծյուբե-Սարայ և Սարայ-Կուլյար խճուղու կառուցման աշխատանքներն ավարտվեն յեկող տարի:

30. Բամբակագործական շրջաններում սուր կերպով զգացվող կազմակերպիչ և տեխնիքական ուժերի պակասը պիտի լրացվի հետևյալ ձեռնարկումների կիրառումով:

Անհրաժեշտ է.—

ա) Հողգողկոմմատի ժողովրդական տընտեսության, բամբակագործական կոռպերացիայի և Բամբակիկոմի որդաններն ուժեղացնել անհրաժեշտ քանակի կուսակցականներով:

բ) Շտապ կարգով կազմակերպիչ և Միջին-Ասիայում աշխատելու համար ուղարկել վոռոգման, բամբակագործության և ընդհանրապես գյուղատնտեսության մասնագետ աշխատողներ: Առանձնապես ուղարկել այնպիսիներին, վորոնք ծանոթ կլինեն յերկրին և Միջին-Ասիայի աշխատանքների պայմաններին:

գ) Անհրաժեշտ համարել տեխնիքական և մյուս մասնագիտական բարձրագույն դպրոցների վերջին գասընթացներում բամբակագործական շրջանների համար պատրաստել աշխատողի աշխատանքներ:

դ) Գյուղատնտեսական և ինժեներական մի քանի դպրոցական հաստատությունների առաջիկա ըրջանավարտ՝ գյուղատնտեսների մեծ մասը հատկապես տրամադրել բամբակագործական կազմակերպություններին և Ջրանտեսություններին:

յե) Միության բարձրագույն դպրոցներում ուժեղացնել ջրաբաշխության կանոնադրությունը:

զ) Ուժեղացնել արտասահմանյան տեխնիքական փորձը՝ արտասահմանից խոչոր տեխնիքական ուժեր ներդրավելու միջոցով:

31. Անհապաղ ձեռնամուխ լինել հիմնելու հատուկ բարձրագույն դպրոց՝ Միջին-Ասիայի համար բամբակագործության և ջրաբաշխության մասնագետներ պատրաստելու համար և ԱՍՖԽՀ բարձրագույն դպրոցներում բամբակագործության և ջրաշխնարարության համար հիմնել հատուկ ամբիոն: Միջին-Ասիայում բարձրագույն դպրոց հիմնելու համար 1929-30 թվի բյուջեյում մուծել պահանջվող միջոցներ, անցկացնելով այդպիսին Միութենական բյուջեյով:

32. Նկատի ունենալով կյանքի դժվարին պայմանները Միջին-Ասիայում, անհրաժեշտ համարել ինժեներ-ապրուշատակիցների բընակարանային շինարարության համար բաց թողնել հատուկ միջոցներ:

33. Կուսակցական, տնտեսական և կոռուկ-

բատիով հիմնարկները կուսակցականներով, կազմակերպիչներով և տնտեսավարներով ուժեղացնելու նպատակով, անհրաժեշտ է բամբակագործական շրջանները գործուղղել շրջանային մասշտաբի կուսակցական և տնտեսական մեծ ստաժ ունեցող 10 աշխատակիցներ՝ ուժեղացնելու ջրային տնտեսության և բամբակագործական հիմնարկներն ու կոռպերացիան, և 50 հոգի գործուղղել՝ ուժեղացնելու տնտեսական, կոռպերատիվ և խորհրդային ստորին որդանները:

Առաջին հերթին Միջին-Ասիա աշխատելու համար գործուղղել այն կուսակցականներին, վորոնք առաջներում աշխատել են Բամբակիոմի և Զրտնաեսության որգաններում:

34. Նշված բոլոր առաջադրությունները բամբակագործական շրջանների, կուսակցական, խորհրդային և տնտեսական կազմակերպություններից պահանջելով մեծագույն ուշադրություն, յեռանդ և ճշտապահություն, առանձին պատասխանատվություն են գնում Գլխամբակիոմի և նրա աշխատակիցների վրա: Գլխամբակիոմի այս բոլոր ձեռնարկումներին կուսակցական, խորհրդային և հաստրական բոլոր կազմակերպություններն անհրաժեշտորեն պիտի ցույց տան ամենալայն աշխալցությունը, ամեն կերպ ամբապնդելով նրա կազմակերպությունները և ուժեղացնելով նրա հեղինակությունը: Գլխամբակիոմը բամբա-

կաղործական հիմնական շրջաններին մոտեցնելու շահերի տեսակետից, նրա գործառնական գործունեությունն ուժեղացնելու և նրա ամբողջ աշխատանքն ավելի սերտ կապելու աղղային հանրապետական կառավարությունների և աեղական որգանների հետ, անհրաժեշտ համբակել Բամբակագործական Գլխավոր Կոմիտեյի, ինչպես և Բամբակագործական Կոռպերատիվ Բյուրոյի աեղափոխությունը Տաշքենդ: Անհրաժեշտ համբակել ուժեղացնելու Գլխամբակիոմի դերը պլաններ կազմելու, ջրաշինարարական աշխատանքներ տանելու մեջ, այլ և ուժեղացնել նրա ազգեցությունը բամբակագործական շրջաններին հաց, արդյունաբերական ապրանքներ և դրազանական ինվենտար մատակարարելու գործում:

35. Պարտավորեցնել Միջին-Ասիայի Կ.Կ. Բյուրոյին, Գլխամբակիոմին և ԽՍՀՄ Բանդուլտեսության Ժողկոմատին մի տարրուց հետո ԿԿ-ին գեկուցելու ավյալ վերաշման իրադարձման ընթացքի մասին:



Հայոց լեզուի տարրական պատմ. № 4
Գլուխակ. № 2761 (բ) Տերած 1500

18. Հ. Ազգային—Գյուղանահանական բանվորութ. և
միջազգ. կոմմունիստական շարժումը (սպառված) 40
19. Ե. Խանի-Աղյան—Ռւզեցույց արդյունավետ խոզա-
բուծության (սպառված) 15
20. Ֆերդինանդուլյան—Հայկաբուծ. և նրա ոգուոն. (աղ.) 20
21. Ա. Գանելիքից—Լոլ և ուշ, քան յերբեք (ալբորի-
յն) (սպառված) 20
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան—Կոտիչառը և կանեփը
(սպառված) [REDACTED]

24. Հրահնուկ Հայաստանի և. Ս. Համբազետուրյան
անսամբլից փայտեղեն բաց քոյնիւու համար
(սպառնակ) 30
25. Պրոֆ. Ավ. Քալանիքար—Կաթիստու կոմիտ կերակր.
(սպառված) 15
26. Ա. Ա. Տրիբոնիու—Ինչու ովեաք և ցելը չաւ տնեմ
[REDACTED]

29. Լ. Սուբուենի—Գոմի դաստի (աղբո-պիյան) 20
30. Ե. Ա. Մելիք-Շահնազարյան—Տիգկանեփ (սպառ.) 5
31. Խ. Տեր-Ներսիսյան—Գոզգուու ծառերի միասնա-
տուներն ու հիվանդությունները (սպառված) 25
33. Արագիշ-Տրտկառ (աղբո-պատմվածք) 15
34. Յարսայի—Խարհրդավոր արտօննչություններ աղբո-զբույց
35. Խնկո-ասեր—Գյուղատնտ-ահասնարույժը և իր աղ-
բո-զբույցը 20
[REDACTED]

37. Մ. Խանջանյան—Մեղմարութության գործնական
ձեռնարկ (սպառված) 60
[REDACTED]

30. Ա. Արմեսյան—Գութման, թե՛ արոր (սպառված) 10
40. Վ. Բոյկով—Այծն աղքատի կոմիտ (սպառված) 20
41. Խ. Տեր-Ներսիսյան—Գոմաղը
42. Խ. Կուգիսեցով—Լենինը և գյուղաց
43. Ա. Մուշեղյան—Միասուր ովեաք



NL0193834



29. 867

44.	Խս. Տեր Ներսիսյան—Ինչողևս պատվաստել պրտ- դատու ծառերը	10
46.	Հ. Ազատյան—Յեռաղաշտից դեպի սոցիալիզմ՝ կոռ- պերացիայի վրայով	1 ռ. 50-
47.	Վ. Միջնայլով—Տավարի վարակիչ հիվանդու- թյունները	5
48.	Մ. Թումանյան—Վեկ	25
50.	Նոյեմբերի ճանապարհին (ժողվ.) (սպառված)	20
51.	Պրոֆ. Ավ. Քալանթար—Կաթնառատ կովի ընտրու- թյունը և նախիրի աղնվացումը	20
52.	Հրահանգ. գյուղատնտ. կոոպ. ընկերութ. տո- մարագրելու կարգի մասին (Հավ. «Գյուղ. Կյանք»-ի)	
53.	ԽՍՀՄ հողոգտագործության և հողաշինարարու- թյան ընդհանուր հիմունիքները	20
54.	Հ. Փիրումյան—Հողժողկոմատի 1927-28 թ. գոր- ծունելյությունը	
55.	Ա. Արանիսյան—Դեպի բերքի բարձրացում	
56.	Վ. Պ. Դոբրինին—Զիերի արհեստ. բեղմնավորումը	25
58.	Ա. Մարգարյան—Վոչխարաբուծություն	50
59.	Ա. Ա. և Ա. Թ.—Բանջարաբուծություն	20
61.	ՀԱՄԿ(թ)ԿԿ վորոշումը բամբակագործության մասին ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿԱՆՉՆՎԵՆ ՏՈՎԳՐՈՒԹՅԱՆ	
1.	Խս. Տեր Ներսիսյան—Ինչողևս մշակել խաղողի արդիները (Բ. ապաղ- բություն)	
2.	Արամիանին—Մեղմագոտի Արդեցույց	
4.	Ար. Խափալյան—Հանրամատչելի գրուցներ դինեղործության մասին: ԴիՄԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ, Հողժողկոմատ՝ Հրատարակչության, «Հայգրի» կենտրոնական և գավառական գրա- խանութներին, Գավիհողբաժիններին:	